

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐՄ ՀԱՅԱՍՏԱ-
ՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 427-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ, 429-ՐԴ ԵՎ 430-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

25 հունվարի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թո-
փուլյանի, Ա. Խաչարյանի, Վ. Հովհաննիսյանի, Ռ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ S. Սաֆարյանի, Ա. Ճուղուրյանի,

գործով որպես պարապահնող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշ-
փոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոն-
յանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-
վածի 1-ին կերպի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կերպի, «Սահմանադրական
դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրսաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Կարեն Հարու-
թյունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավա-
րության օրենսգրքի 427-րդ հոդվածի երկրորդ մասի, 429-րդ և 430-րդ հոդվածների՝
Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության
հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Կ. Հարությունյանի՝ 11.08.2010թ. ՀՀ
սահմանադրական դատարան մուգբագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պարասիանող կողմերի գրավոր բացաբրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Յ.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից սպորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի վիճարկվող դրույթները եւ հոդվածները գեփեղված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական որոշումների կադարձում» վերդառությամբ 12-րդ բաժնի նույնանուն 49-րդ գլխում:

Օրենսգրքի 427-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասում սահմանված է. «...2. Օրինական ուժի մեջ մտած դատական որոշումը կադարձան է հանձնվում որոշումը կայացրած դատարանի կողմից ոչ ուշ, քան այն ուժի մեջ մտնելուց կամ վերաբռնիչ կամ վճռաբեկ ապյանից գործը վերադարձվելուց 3 օր հետո»:

Օրենսգրքի 429-րդ եւ 430-րդ հոդվածները համապարասիանաբար սահմանում են դատական որոշումն ի կադարձ ածելու փուլում դատապարբյալի իրավունքները եւ դատական որոշման վերաբերյալ կասկածների ու անհարակությունների լուծման կարգը:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապարմությունը հանգում է նրան, որ Երեւան քաղաքի Վրաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ապյանի դատարանը 2007թ. օգոստոսի 7-ին կայացրած դատավճռով դիմողին դատապարբեկ է երեք դատավարական դատարանների ու անհարակությունների լուծման կարգը:

Վերոհիշյալ դատավճռի դեմ մեղադրողը ներկայացրել է վերաբռնիչ բողոքը: ՀՀ վերաբռնիչ քրեական դատարանն իր՝ 2007 թվականի սեպտեմբերի 28-ի դատավճռով անփոփոխ է թողել առաջին ապյանի դատարանի դատավճիռը, իսկ վերաբռնիչ բողոքը՝ առանց բավարարման:

« ՀՎ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ դատավճռի դեմ մեղադրող կողմը ներկայացրել է վճռաբեկ բողոք: ՀՎ վճռաբեկ դատարանի 2007թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ բեկանվել է ՀՎ վերաքննիչ քրեական դատարանի 2007թ. սեպտեմբերի 28-ի դատավճիռը եւ գործն ուղարկվել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության, այն հիմնավորմամբ, որ ազատազրկման ձեւով պարփիժը պայմանականորեն չկիրառելն անարդարացի է՝ ակնհայտ մեղմ լինելու պարճառով, չի համապատասխանում դատապարփյալի կարարած հանցագործության ծանրությանը եւ դատապարփյալի անձին:

ՀՎ վերաքննիչ քրեական դատարանը գործի նոր քննության արդյունքում իր՝ 2008թ. ապրիլի 25-ի որոշմամբ դարձյալ օրինական ուժի մեջ է թողել Երեւան քաղաքի Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ավյանի դատարանի 2007թ. օգոստոսի 7-ին կայացրած դատավճիռը: Որոշումն ուժի մեջ է մտել հրապարակման պահից:

Դիմողի վերաբերյալ քրեական գործը ՀՎ վերաքննիչ քրեական դատարանից Երեւան քաղաքի Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում սպացվել է 2008թ. մայիսի 15-ին:

ՀՎ արդարադարձության նախարարության քրեակարգարողական վարչության այլընդունակային պարփիժների կարարման բաժնի Արարկիր եւ Քանաքեռ-Զեյթուն բաժնում դիմում նկարմամբ կայացված դատավճիռն սպացվել է 2008 թվականի հունիսի 24-ին, եւ հիմք ընդունելով ՀՎ քրեակարգարողական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի. «Փորձաշրջանը հաշվարկվում է դատապարփյալին ազատությունից գրկելու հետ չկապված պարփիժների կարարման սկորաբաժնումում, իսկ զինծառայողին՝ նրա զորամասի հրամանագրության կողմից հաշվառման վերցնելու պահից», փորձաշրջանն սկսվել է հաշվարկվել այդ օրվանից:

Շեպագայում, գրնվելով փորձաշրջանի մեջ, դիմուղը կարգարել է մեկ այլ հանցագործություն, ինչի համար Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հունիսի 23-ի դատավճռով դատապարփվել է ազատազրկման երեք դարի ժամկետով, նախկին դատավճռով նշանակված պարփիժը պայմանականորեն չկիրառելը վերացվել է, եւ նախկին դատավճռով նշանակված եւ չկրած պարփիժը երկու դարի ժամկետով ազատազրկումը գումարվել է վերջին դատավճռով նշանակված պարփիժն: Արդյունքում՝ դիմողի նկարմամբ նշանակվել է պարփիժ՝ ազատազրկում հինգ դարի ժամկետով:

Այսուհետեւ դիմողը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դափարան՝ խնդրելով դափարանի կողմից սահմանված փորձաշրջանի ժամկետը հաշվարկել իր նկարմամբ կայացված առաջին դափական ակտի ուժի մեջ մտնելու պահից: Միջնորդության հիմքում դիմողի կողմից դրվել է այն փաստը, որ իր նկարմամբ կայացված առաջին դափական ակտը չկապարելու արդյունքում փորձաշրջանի հաշվարկն սկսվել է շուրջ ինն ամիս ուշացումով: Միջնորդությունը դափարանի կողմից մերժվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դափավճոհի ի կարար ածման փուլում կասկածներ կամ անհափակություններ չկան:

3. Դիմողը որպես օրենսգրքի վիճարկող 427-րդ հոդվածի երկրորդ մասի հակասահմանադրականության հիմնական փաստարկ ներկայացնում է այն, որ հիշյալ դրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին այնքանով, որքանով որ այն չի նախադրեսում դափական որոշումները կափարման ուղարկելու հսկակ ընթացակարգ:

Օրենսգրքի 429-րդ եւ 430-րդ հոդվածների առնչությամբ դիմողը գրնում է, որ նշված հոդվածներում առկա է օրենսդրական բաց, որը հնարավորություն չի պալիս դափապարբերակին գործը վերադաս դափական արյանից զվերադավելու կամ ուշ վերադավելու եւ որպես հետեւանք՝ օրինական ուժի մեջ մտած դափական ակտն ի կարար չածվելու կամ ուշ ի կարար ածվելու դեպքում «իր համար վրա հասած վագ հետեւանքները վերացնելու» նպարակով օգնվելու դափական պաշտպանությունից:

4. Պարագայության կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, նախ գրնում է, որ դիմողի փաստարկներն ուղղված են միայն ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի հակասահմանադրականությունը հիմնափորելուն, ինչը վկայում է այն մասին, որ դիմողն ըստ էության վիճարկում է միայն նշված նորմի սահմանադրականությունը:

Որոշումը կայացրած դափարանը վերադաս դափական արյանների կայացրած որոշումների մասին իրագեկվում է միայն համապատասխան դափական ակտը եւ գործը դափարան ուղարկելու միջոցով: Բացի դրանից, դափական որոշումների կափարման ընթացքում երբեմն առաջանում են իրավական բնույթի հարցեր, առանց որոնց լուծման հնարավոր չէ ապահովել դափական որոշումների ի կարար ածումը:

Այդ հարցերը քննվում են լուծվում են միայն դադարանի կողմից՝ ՀՀ քրեական դադարության օրենսգրքով սահմանված կարգով: Ըստ պարասիստնողի՝ դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ օրենսդիրն օրինական ուժի մեջ մտած դադարական որոշումը կադարձան հանձնելը պայմանավորել է վերաբննիչ կամ վճռաբեկ ադյանից գործն սպանալու հանգամանքով:

Ըստ պարասիստնողի՝ օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը համապարասիստում է նաև իրավական որոշակիության սկզբունքին: Այդ դրույթը սահմանում է դադարական որոշումը կադարձան հանձնելու, պարժի ժամկետի հաշվարկման կարգը:

Վկայակոչելով ՀՀ քրեակադարողական օրենսգրքի 131-րդ հոդվածով սահմանված՝ փորձաշրջանի հաշվարկման կարգը, առանձին ենթաօրենսդրական ակտերով սահմանված համապարասիստն իրավակարգավորումը՝ պարասիստող գրնում է, որ պարժիքը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի հաշվարկման կարգը հսկակ է եւ դադարարդյալին հնարավորություն է պալիս հսկակ կանխորշելու իր վարքագիծը եւ կանխափեսելու դրա հնարավոր հետևանքները:

5. Դիգորկելով ՀՀ քրեական դադարավորության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներն իրավական որոշակիության սկզբունքի գործառնությունից՝ ՀՀ սահմանադրական դադարան արձանագրում է, որ ՀՀ քրեական դադարավորության օրենսգրքի 12-րդ բաժնի 49-րդ գլխի հոդվածները՝ իրավակարգավորման առարկայի ամբողջականության մեջ, դադարական ակտի օրինական ուժի մեջ մտնելու, դադարանի որոշումը կադարձան հանձնելու, դադարական որոշումն ի կապար ածելու փուլում դադարարդյալի իրավունքների ապահովման, դադարական որոշման վերաբերյալ կասկածների եւ անհապակությունների լուծման, դադարական որոշման կադարձան հետաձգման հարցերով իրավակարգավորման բաց կամ անհապակություն չունեն:

Միաժամանակ, առկա է հասկացութային որոշ անհապակություն: Մասնավորապես, եթե դադարական ակտերի ուժի մեջ մտնելու հետ կապված հարցերը լուծելիս օրենսդիրն օրենսգրքի նույն 427-րդ հոդվածի 1-ին մասում կիրառում է «դադարանի՝ գործն ըստ էության լուծող դադարական ակտ», «դադարանի՝ գործն ըստ էության չլուծող դադարական ակտ», «վերաբննիչ դադարանի եւ վճռաբեկ դադարանի դադարական ակտեր» եզրույթները (որոնց մեջնաբանությունն ըստ էության փրկած է ՀՀ

քրեական դափավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում), ապա օրենսգրքի 427-րդ հոդվածի՝ վիճարկվող 2-րդ մասում, կարգավորելով դափական ակտերի ի կափար ածման հետ կապված հարաբերությունները՝ օրենսդիրը կիրառում է «**դափական որոշում**» եզրույթը (այն դեռ է գրել նաև օրենսգրքի 52, 54, 289, 428, 429, 430, 431, 437, 499.15-րդ հոդվածներում):

«**Հ** քրեական դափավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի վերնագրում նախկինում դեռ է գրել «դափարանի որոշման» բառակապակցությունը, որը հետագայում՝ 28.11.2007թ. ՌՕ-270-Ն օրենքով փոխարինվել է «դափական ակտերի» բառակապակցությամբ, նույնն էլ վերաբերում է նույն օրենքի հիման վրա վերոհիշյալ հոդվածի 1-ին մասում կափարված փոփոխությանը, որքեղ նույնպես «դափարանի որոշում» բառակապակցությունը փոխարինվել է «դափական ակտեր» բառակապակցությամբ:

«**Հ** քրեական դափավարության օրենսգրքի՝ «**Ք** քրեական դափավարության օրենսգրքում դեռ գրած հիմնական հասկացությունները» վերբառությամբ 6-րդ հոդվածի 9) ենթակերպում սահմանվում է «**որոշում**» եզրույթը՝ «որոշում՝ քրեական գործով դափարանի որոշումները, բացի դափավճռից, ինչպես նաև մինչդափական վարույթի ընթացքում հետաքննության մարմնի, քննիչի, դափախազի կայացրած որոշումները», իսկ 7) ենթակերպում դրվում է «**դափավարական որոշումներ**» եզրույթի սահմանումը, այն է՝ «դափավարական որոշումներ՝ քրեական դափավարության ընթացքում իրավասու մարմինների կամ պաշտոնափար անձանց կողմից ընդունվող՝ սույն օրենսգրքով նախադեսված որոշումներ՝ դափավճռներ, որոշումներ»: Մինչդեռ «**Հ** քրեական դափավարության օրենսգրքում «դափական որոշում» եզրույթի որեւէ մեկնաբանություն առկա չէ, որը հանգեցնում է հասկացութային անհափակության:

Սահմանադրական դափարանը միեւնույն ժամանակ արձանագրում է, որ իրավակիրառական պրակտիկայի կողմից «**Հ** քրեական դափավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասում դեռ գրած «դափական որոշում» եզրույթը մեկնաբանվում է որպես օրինական ուժի մեջ մրած և կիրառման ենթակա ցանկացած դափական ակտ, ինչը բխում է օրենսդրության դրամաբանությունից: Այսինքն՝ օրենսգրքի վերոհիշյալ դրույթներում դեռ գրած՝ վերը նշված հասկացություններն իրավակիրառական պրակտիկայում առկա մեկնաբանության շրջանակներում չեն առաջացնում իրավական անորոշություն եւ դրա արդյունքում՝ անձանց սահմանադրական իրավունքների խախմբան վրանց:

6. Սահմանադրական դափարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ գործը վերաքննիչ կամ վճռաբեկ դափարանից առաջին ափյանի դափարան ուղարկելու առանձին ընթացակարգ: Դա վերաբերում է նաև հիշյալ դափարաններից գործն առաջին ափյանի դափարան ուղարկելու հսկակ ժամկետներին, որով անմիջականորեն պայմանավորված են մի շարք պարզամիջոցների հաշվարկման ժամկետները: Սակայն հաշվի առնելով ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման նպագրակն ու առարկան՝ սահմանադրական դափարանը գրնում է, որ վերը նշված բացը պայմանավորված չէ ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի 427-րդ հոդվածի 2-րդ մասի առկա ձեւակերպմամբ:

Իր մի շարք, մասնավորապես՝ ՍԴՈ-864 եւ ՍԴՈ-914 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ սահմանադրական դափարանն արդահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումը հանդիսանում է օրենսդիր իշխանության իրավասությունը: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումների՝ «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դափարանի իրավասությունները դիրքարկելով իշխանությունների գրանցարման սկզբունքի համապերսպում՝ սահմանադրական դափարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, եթե իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գրնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պարվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է»: Նաշվի առնելով սույն գործի առանձնահավաքությունները՝ սահմանադրական դափարանը գրնում է, որ իրավունքի բացի վերաբերյալ ՍԴՈ-864 եւ ՍԴՈ-914 որոշումներում արդահայտված իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև սույն գործի շրջանակներում:

7. ՀՀ քրեական դափավարության օրենսգրքի վիճարկվող 429-րդ հոդվածի առնչությամբ սահմանադրական դափարանը գրնում է, որ այդ հոդվածի առանձին դրույթներ, մասնավորապես, 429-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ եւ 3-րդ պարբերությունները, 4-րդ մասի երկրորդ նախադասությունը դիմողի նկարմամբ չեն կիրառվել:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դադարաբության օրենսգրքի 429-րդ հոդվածի մյուս դրույթներին և 430-րդ հոդվածին, ապա դրանց առնչությամբ սահմանադրական դադարանը գրնում է, որ հաշվի չի առնված «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հարկանիշով: Անհապական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել եւ ինչ անմիջական պարզաբանական կապ է առկա վիճարկվող օրինադրույթի եւ իր իրավունքների խախտման փասդի միջեւ:

Նշված պահանջը չկապարելու պարագայում՝ սահմանադրական դադարանը հաշվի առնելով 17.03.2009թ. ՍԴՀՈ-21 որոշման մեջ արդահայրված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «անհապական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դադարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փասդարկներ այն հիմնավորելու համար», գրնում է, որ ՀՀ քրեական դադարաբության օրենսգրքի 429-րդ և 430-րդ հոդվածների առնչությամբ դիմումն ակնհայտ անհիմն է:

«Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Սահմանադրական դադարանը կարճում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախադասական դադարական դադարաբության մեջ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դադարաբության օրենսգրքի 427-րդ հոդվածի երկրորդ մասը համապարասիանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի պահանջների հիման վրա՝ գործի վարույթը մասամբ՝ Հայաստանի Հանրապետության քրեական դադարության օրենսգրքի 429-րդ և 430-րդ հոդվածների մասով, կարձել:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՌՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25 հունվարի 2011 թվականի
ՍԴՈ-933